Հետազոտական աշխատանք՝ Հայկական հարսանեկան ավանդույթները

Հարսանեկան ավանդույթները կազմում են մշակույթի մի մեծ մասը և հակված են փոփոխությունների: Որոշ ավանդույթներ մնում են նույնը՝ չկորցնելով իրենց իմաստը և կարևորությունը, իսկ ուրիշները ժամանակի ընթացքում մոռացվում են: Այս հետազոտական աշխատանքի նպատակը պարզելն է, թե որո՞նք էին հին հայկական հարսանիքների ավանդույթները և համեմատել նրանք այսօրվա հարսանեկան տոնակատարությունների հետ: Աշխատանքում ներկայացված են մի քանի նմանություններ, ինչպես և մի քանի տարբերություններ:

Առաջին հարսանեկան ավանդույթը, որին մարդիկ հետևել են հնում, սակայն ոչ այսօր, դա աշնանը և մինչև Տեառնընդառաջն ամուսնանալն է: Հին ժամանակներում ընդունված էր, որ զույգերը պետք է հարսանեկան արարողությունները անցկացնեին աշնանը՝ մինչև Տեառնընդառաջը, ինչպես նաև միայն կիրակի կամ շաբաթ օրերին, սակայն այսօր այդ սովորույթները չեն պահպանվել և մարդիկ ամուսնանում են տարվա բոլոր եղանակներին և օրերին:

Երկրորդ ավանդույթը, որը տարածված է եղել հնում և մինչ օրս էլ պահպանվել է, դա խաղ-կատակներն են, օրինակ՝ հարսի կոշիկ «գողանալը»: Որպես ավանդույթ, հարսի զարդերը, կոշիկները և զգեստը բերում էր փեսան, և դռնից ներս մտցնելու պահին հարսի բարեկամներից ամենաճարպիկը կոշիկներից մեկը գողանում էր: Այնուհետև երբ քավորակինը հարսին օգնում էր հագնվել, տեսնում էր, որ կոշիկները պակասում են և իզուր ժամանակ չկորցնելու համար գողացողին մի որոշ չափի գումար էր տալիս և հետ վերցնում կոշիկը: Խաղերից մեկ ուրիշը տեղի էր ունենում, երբ հարսը պատրաստվում էր արդեն տանից դուրս գալ: Դուրս գալու ժամանակ հարսի եղբայրը սրով փակում էր դուռը, ակնարկելով, որ չի թողնում հարսին ամուսնանալ և տնից հեռանալ: Այս ժամանակ քավորը եղբորը գումար էր առաջարկում՝ ճանապարհը բացելու դիմաց:

Երրորդ ավանդույթը, որ պահպանվել է, սակայն մի փոքր փոխել իր իմաստը, դա նոր ամուսնացած կնոջը “օժիտ” տալն է: Հնում հայերի մոտ ընդունված էր, որ նորապսակ կնոջ ծնողները իրեն նվիրեին “օժիտ”, որը բաղկացած էր անկողնուց, կահույքից, զգեստներից և կենցաղային պարագաներից: Չնայած նրան, որ մինչ այժմ էլ այս ավանդույթը պահպանվել է, այն հիմա ունի նոր հասկացություն: Հարսի ծնողները զույգին նվիրում են բնակարան, ավտոմեքենա կամ մի որևէ ուրիշ երկրում մեղրամիսի տոմսեր:

Ճիշտ է շատ ավանդույթներ փոխվել են տարիները ընթացքում՝ ոմանք ուղղակի մոռացվել, ոմանք էլ ձևափոխվել, սակայն միևնույն է բազմաթիվ սովորություններ ձեռնս կան և գործում են: Փոփոխությունները անխուսափելի են ցանկացաց երկրում և մշակույթում, սակայն փոփոխությունը ոչ միշտ է գնում դեպի վատը և հայկական հարսանիքների ավանդույթները դրա վառ օրինակն են: Հետազոտությունը կատարելուց

բացահայտեցի զանազան փաստեր, որոնց մասին մինչ օրս չգիտեի և ավելի լավ ծանոթացա իմ երկրի մշակույթի և սովորությունների հետ:

Հետազոտությունը իրականացնող՝ Աննա Հարությունյան 12-րդ դասարան

Աղբյուրներ՝ 1, 2